ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA
0064, Երևան. Ռաֆֆու 57 հեռ: (374 10) 74 72 46. (374 91) 43 10 99 info@mskh.am www.mskh.am
Raffy 57.Yerevan, tel:(374 10)74 72 46.(374 91)43 10 99 https://www.facebook.com/mxitar.sebastaci?fref=ts

17-05-207 29. 05.2017թ.

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ Լ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի նախարար.

Կրթահամալիրում մշակվող, իրականացվող, տարածվող հեղինակային կրթական ծրագրի ձեռքբերում դպրոց-պարտեզը, որ 2017թ. մայիսի 19-ին ներկայացվեց ՀՀ ԿԳՆ-ում կլոր սեղանին, Ձեր առաջարկությամբ հունիսի 5-7-ը ֆիզիկական միջավայրում պատրաստ ենք ներկայացնելու կրթահամալիրի Հարավային դպրոց-պարտեզում (հասցեն՝ Ծովակալ Իսակովի 52/6): Շրջայցի մասնակիցները կծանոթանան դպրոց-պարտեզ հաստատության մեր մոդելին՝ իր 2-4 տարեկանների նախադպրոցականի խնամքի և զարգացման խմբերով, «Իմացումի հրճվանք» ծրագրով՝ 5 տարեկանների ուսուցման, 1-3-րդ դասարաններով, նախագծային ուսուցման 4-5-րդ դասարաններով, լրացուցիչ կրթությամբ, երկարօրյա ուսուցմամբ ամբողջական ներառական միջավայրով, կազմակերպմամբ: Ինչպես գիտեք, կրթահամալիրի դպրոցներում մայիսի 29-ին մեկնարկում է «Ուսումնական ամառ» ծրագիրը. Դուք կտեսնեք ամառային պարտեզը՝ իր բաց լողափով, լողափնյա դպրոց-ճամբարը՝ ամառային ուսումնական գործունեությամբ, որում ներառված են նաև ոչ կրթահամալիրցի ճամբարականներ: Շրջայցը կավարտվի քննարկմամբ. կներկայացվեն դպրոց-պարտեզի զարգացման ծրագիրը, բնակելի զանգվածներում դպրոց-պարտեզների ցանցի ստեղծման առաջարկություն: Առաջարկում ենք, որ շրջայցին մասնակցեն Երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանների ղեկավարներ, քաղաքի տարբեր հատվածների նախադպրոցական հաստատությունների, հիմնական դպրոցների ղեկավարներ, ՀԼՄ-ներ: Շրջայցը, քննարկումը կարող է տևել ընդամենը մեկ ժամ, Ձեր ընտրությամբ ժամը 10:00-12:00. խնդրում ենք նշանակել օրը, ժամը:

Շրջայցի մանրամասն ծրագիրը, լուսաբանումը պատշաճ կիրապարակվեն mskh.am-ում, դպրոցի ենթակայքում, սովորողների, դասավանդողների ուսումնական բլոգներում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԲԼԵՅԱՆ